# ՎԱԿԻԴԻ (747-822)

*Աբու Աբդալլահ Մուհամմադ իբն Օմար ալ-Վակիդին ծնվել է Մադինայում, եղել է Բաղդադի դատավորը: Նրան այդ պաշտոնին նշանակեց Մամուն խալիֆան դահին բարձրանալուն պես: Տեղեկություններ կան, որ նա շատ առատաձեռն անձնավորություն է եղել, փորձել է զբաղվել հացահատիկի առևտրով, բայց ձախողվել է և ընկել պարտքերի տակ: Վակիդին մահմեդական իրավագիտության մասնագետ էր: Հեղինակ է «Մատյան արշավանքների մասին» (Քի-տաբ ալ-Մաղազի) գրքի, որտեղ շարադրում է Մուհամմադի կյանքի օրոք իրականացված արշավանքների պատմությունը:*

*Վակիդիին է վերագրվում նաև «Ասորիքի նվաճումը» (Ֆուտուհ ալ-Շամ) երկը, որից էլ կատարված են թարգմանություններ ներկա հատորում: Թեև կան դիտնականներ (Լեդեր), որոնք այդ վերագրումը համարում են ոչ ճիշտ:*

(Вакыди, Е. А. Беляев, Сов. ист. энц., т. 2, М. 1962, стр. 930, *Encyclopaedia of Islam, v. XI, pp. 101-103, al-Wakidi, S. Leder).*

*Տե՛ս նաև.*

- *History of Muhammeds campaigns by al-Wakidy, ed. By A. Kremer, Calcutta, 1856.*
- *Futuh ash-Sham, 1-2 v. Cairo, 1302 hijriyya.*
- *W. Nassau Less, 3 vols., Calcutta 1854-1862.*